



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 4 Յունուար. Սրբոցն՝ Բարսղի Հայրապետին եւ եղբոր նորա Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հոռոմայ Հայրապետին եւ Աբբա Եփրեմի Խուրին Ասորւոյ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի։ Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան։

Կիրակի, 5 Յունուար. Ե. Կիրակի Յիսնակի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ։ Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան։

Կէսօրէ ետք, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին։

Երկուշաբթի, 6 Յունուար. Սրբոցն՝ Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի)։

Հստ սովորութեան, Առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառ եւ եմփփորոն զգեցած, «Փառք ի բարձունս»-ին բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատւանդանին, ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը, եւ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներուն շնորհաւորութիւնները։

Առաւօտեան ժամերգութեան վերջաւորութեան Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար։

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց Տ. Կորին Եպս. Բաղդասարեան։ «Հայր Մեր»-էն առաջ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարւած հոգեհանգստեան պաշտօնին։

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին։ Տօնին բուրվառակիր հայ-

րերն էին Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան եւ Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան։

Երեքշաբթի, 7 Յունուար. Սրբոցն Ստեփանոսի Նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին։ Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս չորս բարեշնորհ սարկաւագներ եւ ութ ուրարակիրներ՝ առաջնորդութեամբ երկու բուրվառակիր հայրերու, մարգարտազարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մտատիպարին։ Արարողութեան նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը։

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի սեղանին վրայ։ Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան։

Չորեքշաբթի, 8 Յունուար. Կէսօրէ ետք, գըլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը։

Հինգշաբթի, 9 Յունուար. Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի։ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատարան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան։

Ուրբաթ, 10 Յունուար. Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որմէ ետք «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը թափօրով բարձրացաւ Պատրիարքարան։

Շաբաթ, 11 Յունուար. Տօն Սրբոց Որդւոցն Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատարան մէջ օրուան Ս. Պատարագը մատուցեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան։

Պատարագէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս թափօրին։ Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիար-

քարան:

Կիրակի, 12 Յունուար.- Զ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան:

Երեքշաբթի, 14 Յունուար.- Կաղանդ: Տարեմուտ 2025 թուականին Քրիստոսի (Ըստ Հին Տոմարի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան՝ երգելով Ս. Աթոռոյ Մաղթերգը: Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց բոլոր ներկաները Նոր Տարուան առիթով եւ ըստ սովորութեան, նարինջ բաժնեց ամենուն:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 18 Յունուար.- Ծրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտեան ժամը 9:30-ին Իսրայէլի Ներքին գործոց նախարարութեան Քրիստոնեայ համայնքներու բաժնի վարիչ՝ Տիար Սեզար Մարճիէ եւ ոստիկանները այցելեցին Պատրիարք Սըրբազան Հօր Ս. Ծնունդը շնորհաւորելու եւ դէպի Բեթղէհէմ թափօրին հսկողութիւնն ապահովելու:

Ժամը 9:45-ին, Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղէհէմ: Ծամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Լուսարարապետ Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչներ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով՝ Լուսարարապետ Սրբազանը եւ Միաբանութեան անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղէհէմի հրապարակին վրայ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Միաբանութեան դիմաւորելու եկած էին Բեթղէհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման, Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի, նահանգապետը եւ բարձրաստիճան զինուորականներ: Թափօրը, որուն երկու կողմէն Հ.Յ.Մ.-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի սկսուտական խումբերը պատուի կեցած էին՝ «Ժորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայոց Վանք:

Յետ միջօրէի ժամը 14:00-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւիթէն դէպի Ս. Ծննդեան Տաճարի Ս. Այրը: Ծրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցել քարոզեց Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան՝ Տ. Ռուբէն Վրդ. Զարգարեան: Ապա Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Ծննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով եւ երգեցողութեամբ Սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարգացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Կիրակի, 19 Յունուար.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: Կէս գիշերէն առաջ ժամը 10-ին սկսուած գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը, որմէ յետոյ Լուսարարապետ Սրբազանը ներկաներուն եւ համայն հայութեանը փոխանցեց Սուրբ Աթոռոյս Գահակալի Ծննդեան պատգամը: Արարողութեաց ներկայ Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչները շնորհավորելով Լուսարարապետ Սրբազան Հայրը՝ մեկնեցան, որմէ յետոյ պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ:

Երկրորդ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Լուսարարապետի պաշտօնակատար՝ Տ. Յարութիւն Վրդ. Կիրակոսեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուած «Ջրօրհնէք»-ի արարողութեան եւ Յովհաննու Կարապետի նախատօնակին հանդիսապետեց Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած՝ Գուգարաց թեմի առաջնորդ՝ Տ. Յովնան Եպս. Յակոբեան, ով նաեւ Ս. Ծննդեան Այրին մէջ երրորդ Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց:

Յաւարտ Ս. Պատարագի Միաբանութիւնը շուրջառնելով եւ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանքի տեսչարան, ուր կարգացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Ծրագալոյցի արարողութիւն կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան, ապա Ս. Գերեզմանին առջեւ կատարուեցաւ «Ջրօրհնէք»:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց, ապա «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան:

Երկուշաբթի, 20 Յունուար.- Բ. օր Ծննդեան: Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ պատարագեց Տ. Ներսէհ Վրդ. Ալոյեան: Հոգեհանգստեան կարգին նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 25 Յունուար.- Է. օր Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան:

Կէսօրին Լուսարարապետ Սրբազան Հօր նախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւագներ, ժառանգաւոր սաներ եւ հաւատացեալ հայորդիներ ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնեաց» արարողութիւն:

Երեկոյեան Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Յովնան Եպս. Յակոբեան:

Կիրակի, 26 Յունուար.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր Տ. Յովնան Եպս. Յակոբեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, ապա տեղի ունեցաւ Միաբանական ճաշ՝ աւանդական «հարիսայով»:

Կէսօրէ ետք նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Երեքշաբթի, 27 Յունուար.- Տօն Ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շաբաթ, 1 Փետրուար.- Սրբոյն Թէոդոսի Թագաւորին եւ Մանկանց Նիկիտոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Ճոնտուրեան:

Կիրակի, 2 Փետրուար.- Ա. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Շաբաթ, 8 Փետրուար.- Սրբոյն Հայրապետացն՝ Աթանասի եւ Կիւրղի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ներսէհ Վրդ. Ալոյեան:

Կիրակի, 9 Փետրուար.- Բ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի սեղանին վրայ: Պատարագեց Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Ուրբաթ, 14 Փետրուար.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 15 Փետրուար.- Ս. Սարգսի Զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինաւորացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս մեծանուն բարերար, հանգուցեալ Գալուստ Կիւլպէնկեանի հօր՝ Սարգիս Կիւլպէնկեանի հոգւոյ համար:

Կիրակի, 16 Փետրուար.- Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագեց Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան:

Շաբաթ, 22 Փետրուար.- Սրբոյն Իսահակայ Պարթեւի Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 23 Փետրուար.- Դ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Պատարագեց Տ. Դեռնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 24 Փետրուար.- Ս. Վարդանանց Զօրավարացն մերոյ՝ հազար երեսուն եւ վեց վալիցն: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, ըստ սովորութեան, պատարագեց եւ քարոզեց Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝

Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

«Հայր մեր»-էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»-ին:

Զորեքշաբթի, 26 Փետրուար. Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանգէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցէ՛ք»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Հինգշաբթի, 27 Փետրուար. Տեառնընդառաջ: Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Ուրբաթ, 28 Փետրուար. Առաւօտեան միաբան հայրեր մեկնեցան Ասորւոց վանք: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետեց եւ Պատարագի ընթացքին քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Սիրոն Աբղ. Թաքուշեան:

Շաբաթ, 1 Մարտ. Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն հարիւր յիսուն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Պատարագեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 2 Մարտ. Ա. Քառասնօրդաց: Բուն Բարեկենդան: Փակեալ Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց եւ «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Ուրբաթ, 7 Մարտ. Նախատօնակին ի Ս. Թորոս նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 8 Մարտ. Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշա-

փառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Քրիստոսի Ս. Գերեզմանին երկրպագելէ ետք Հայոց վերնամատրան մէջ պաշտուեցան Երեկոյեան Ժամերգութիւնն ու նախատօնակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 9 Մարտ. Բ. Քառասնօրդաց. Արտաքսման: Առաւօտեան ժամը 5:15-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ՝ հանդիսապետութեամբ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի: Երկրորդ մուտքը տեղի ունեցաւ 8:30-ին, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Շաբաթ, 15 Մարտ. Սրբոյն՝ Կիրղի Երուսաղիմայ հայրապետին եւ միւս Կիրղի Եպիսկոպոսին եւ մօրն նորա՝ Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն՝ Կարապետի եւ Մարիի եւ Կիրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 16 Մարտ. Գ. Քառասնօրդաց. Անառակին: Ժամերգութիւններն ու Ս. Պատարագը մատուցուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Շաբաթ, 22 Մարտ. Սրբոյն Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին եւ Հայրապետին մերոյ՝ Յովհաննու Օձնեցւոյն եւ վարդապետացն մերոց Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 23 Մարտ. Դ. Կիրակի Քառասնօրդաց, Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի սեղանին վրայ: Պատարագեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Շաբաթ, 29 Մարտ.– Սրբոց Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, ականդական սառցապատ լիճը խորհրդանշող։ Ժամարարն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան։ Յընթացս Ս. Պատարագի կատարուեցաւ Սարկաւազական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի։

Կէսօրէ ետք Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան Երեկոյեան Ժամերգութիւնն ու նախատօնակը։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն՝ թափօր, տաճարէն

ներս։ Թափօրապետն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան։

Կիրակի, 30 Մարտ.– Ե. Քառասնորդաց։ Դատաւորին։ Առաւօտեան ժամը 6:45-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան տաճարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան։

Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, օրուան Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը։ Ս. Պատարագէն ետք Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նախագահեց պատարագիչ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հայրը։

Պատրաստեց՝ ՍԻՈՆ ԱՐԵՂԱՅ ԹԱՔՈՒՇԵԱՆ

